ՀՏԴ 321.7

Ն.Ք. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Անդրադարձ է կատարվել ժողովրդավարության արտահանման արդիական ու կարևոր խնդրին, որի հետ այսօր առնչվում է գրեթե ցանկացած երկիր: Հատկապես ուշադրության է արժանացել հետսառըպատերազմյան ժամանակահատվածը՝ որպես ամենաակտիվ ժամանակաշրջան: Անդրադարձ է կատարվել տարբեր երկրներ ժողովրդավարության արտահանման առանձնահատկություններին՝ կախած տվյալ երկրի զարգացման մակարդակից ու ազգային հոգեկերտվածքից:

Առանցքային բառեր. ժողովրդավարություն, արտահանում, պետություն, ազգային հոգեկերտվածք:

Ժողովրդավարությունը միջոց է, որը հնարավորություն է տալիս երաշխավորելու մարդու ազատություններն ու իրավունքները, սակայն այն չի երաշխավորում նրանց պաշտպանվածությունը կոռուպցիայից, անարդարությունից, ոչ կոմպետենտ որոշումներ ընդունելուց: Ժողովրդավարությունը և ազատ շուկան հնարավորություն են տալիս, սակայն չեն ապահովում այս ամ այն երկրի առջև ծառացած խնդիրների հանգուցալուծումը: Ժողովրդավարությունը հիմնականում բնորոշ է զարգացած երկրներին (ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա, Կանադա) իսկ թույլ զարգացած երկրները (Լատինական Ամերիկա, Արևելյան Եվրոպա) առավելապես գտնվում են ժողովրդավարության զարգացման ցածր մակարդակի վրա: Զարմանալի չէ այն փաստը, որ զարգացած երկրները ձգտում են իրենց մակարդակին հասցնել ավելի թույլերին, բոլոր ընդունելի, կամ ոչ ընդունելի միջոցներով նրանց պարտադրելով շուկայական տնտեսություն, ժողովրդավարական համակարգեր: 20-րդ դարի սկզբին նման մեթոդի կրողն էին բոլշևիկները, ովքեր տարվելով աշխարհը վերակառուցելու, համաշխարհային հեղափոխություն կատարելու, հավասարություն, արդարություն ու եղբայրություն հաստատելու ցնորամիտ գաղափարներով, կանգ չառան ոչ մի միջոցի առաջ: Այդ նպատակով նրանք կազմակերպում էին հեղաշրջումներ, ֆինանսավորում ընդդիմադիր «առաջադեմ ուժերի», միջազգային արենայում հոգուտ նրանց լոբբինգ իրականացնում և այլն: Իրենց մտահղացումներն իրականացելու համար նրանք պատրաստ էին ցակացած քայլի, անգամ եթե այն հակասում էր տվյալ ազգի շահերին ու հոգեկերտվածքին:

Արդի ժամանակներում, ցավոք, ժողովրդավարության տարածումը ևս պարունակում է պարտադրաբար արտահանման բաղադրիչներ, ինչը նսեմացնում է նրա՝ որպես հասարակության առաջընթացի կարևոր գործոնի և երաշխավորի դերակատարությունը:

Արդի դարաշրջանում ժողովրդավարության արտահանման հզոր ալիքը համընկավ երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին, այն հորդեց արևմտյան դաշնակիցներից՝ ներառելով Գերմանիան, Իտալիան, Ճապոնիան, մասամբ նաև Ավստրիան: Հարկ է նշել, որ առաջին ալիքը արմատապես տարբերվում է երկրորդից, որի սկիզբը ազդարարվեց ԽՍՀՄ փլուզումով: Եթե առաջին ալիքի ժամանակաշրջանում հասարակությունը հիմնականում զբաղված էր կենցաղային խնդիրներով՝ ինչպես ապրել, ինչպես հաղթահարել ֆաշիզմի հետևանքները, ապա երկրորդ ալիքը սկսվեց միանգամայն այլ պայմաններում և այլ մակարդակներում: Երկրորդ ալիքի հիմնական թիրախը սոցիալիստական ճամբարի ու ԽՍՀՄ փլուզման հետևանքով առաջացած նորանկախ երկրներն էին, որոնց կյանքի մակարդակը անհամեմատ բարձր էր իրենց նախորդող սերունդներից, սակայն ցածր՝ Արևմտյան Եվրոպայի երկրներից: Ժողովրդավարության արտահանման երկու ալիքները, պայմանավորված իրավիճակով, ժամանակաշրջանի մարտահրավերներով և զարգացման մակարդակով, բնականաբար, տարբերվում էին նաև առաջադրված խնդիրներով: Երկու ալիքները միմանցից տարբերվում էին նաև ֆինանսական խնդիրներով: Եթե առաջինի դեպքում հիմնական շեշտը դրվում էր ֆինանսական առողջացման վրա, հիմնականում ըստ «մարշալի պլանի». (հին պարտքերի չեղարկում, ֆինանսական օգնություն և այլն), ապա երկրորդի դեպքում հիմնականում բավարարվում էին համաշխարհային բանկի կողմից տոկոսադրույքներով վարկի տրամադրմամբ և այն ժամանակին վերադարձնելու պարտադրանքով: Արդյունքում՝ ֆաշիստական բլոկի նախկին երկրները՝ Գերմանիան, Իտալիան, Ճապոնիան, կարճ ժամանակահատվածում ապահովեցին տնտեսական բարձր աճ և քաղաքական կայունություն, իսկ սոցիալիստական ճամբարի և հատկապես ԽՍՀՄ-ից անջատված երկրները գտնվում են ֆինանսական ծանր վիճակում, ինչը շատ հաճախ հանգեցնում է քաղաքական անկայունության, քաոսի և ժողովրդավարության արժեքների նկատմամբ թույր պատկերացման: Կարծում ենք, որ ժողովրդավարական արժեքների արտահանումը այս երկրներ ևս պետք է ուղեկցվեր ժամանակի պահանջներին և ոգուն համապատասխան նորացված «մարշալի պլանով», այլապես նման իրավիճակը շատ հաճախ առաջ է բերում կարոտախտ անցյալի՝ և անվստահություն ապագայի նկատմամբ, ինչը պարարտ հող է ստեղծում մութ ուժերի, տեռորիստական խմբավորումների ակտիվ գործունեության համար:

Ամերիկյան գաղափարախոսությունը անհատի ազատության, ինքնակազմակերպման, ինքնակառավարման, ժողովրդավարության ամենահեղափոխական գաղափարն է: Առանց ամերիկյան, ինչու չէ, հաճախ նաև առանց բրիտանական գաղափարական ինտերվենցիայի ժամանակակից ժողովրդավարությունը չէր լինի կամ էլ պարզապես չէր գոյատևի:

Վերջին 100-ամյակի ընթացքում ԱՄՆ երեք անգամ փրկել է Ֆրանսիան, 1917թ.՝ Պրուսական միլիտարիզմից, 1944թ.՝ ֆաշիստական օկուպացումից, ետպատերազմյան շրջանում՝ սովետական կոմունիզմից: Ֆրանսիական ազատությունը կարելի է համարել ամերիկյան ինտերվենցիայի արդյունք: «Ժողովրդավարությունը չընդհատվող հեղափոխություն է» [1]: Ամերիկյան ժողովրդավարության առաջատար դերի առկայությունը փորձագետը մեկնաբանում է՝ ելնելով որոշակի փաստերից: Ի սկզբանե ամերիկյան պատմության հիմքը եղել է ազատության համար պայքարը: 1770-ական թվականներին ԱՄՆ-ը Ֆրանսիայի օգնությամբ հաղթանակ տոնեց և ազատագրվեց բրիտանական կառավարումից: Նրանք կռվում էին անգլիացիների դեմ՝ հանուն ինքնակառավարման, ոգեշնչվելով նրանց իսկ գաղափարներից: Հարկ է նշել, որ ազատության ամերիկյան գաղափարները սնվել են 17-րդ դարի անգլիական հեղափոխությունից, երկու քաղաքացիական պատերազմներից, ինչպես նաև Ջոն Լոկի փիլիսոփայական հայացքներից:

Ժողովրդավարությունն ու ազատությունը առավել գերիշխող դիրք գրավեցին 20-21-րդ դարերում, քանզի քաղաքական առաջընթացը ուղեկցվում էր տնտեսական վերելքով: «Շատ երկրների ու ժողովուրդների համար ամերիկյան ազատությունը, ժողովրդավարությունը երազանք էր, իսկ դրան հասնելու դժվարությունները՝ անտեսանելի» [2]:

Ամերիկացիները երկու անգամ աննշան զոհերով կարողացան հաղթանակ տոնել Պարսկական ծոցում, Կոսովոյում, Աֆղանստանում, քանի որ նա ունի աշխարհի ամենաառաջադեմ, զարգացած գիտությունը, լավագույն տեխնոլոգիաները, աշխատանքի ամենաբարձր արտադրողականութունը, ամենաբարձրորակ ու զարգացած էլեկտրոնային կապը և այլն: Կարելի է վստահորեն ասել, որ չնայած այս բոլորին, ԱՄՆ-ի հզորության հիմքը «ազատ տնտեսությունն է և ազատ հասարակությունը» [3]:

Ժողովրդավարության գլխավոր արտահանողը ԱՄՆ-ն է, որի գործունեության ձևերը բազմազան են, պայմանավորված տվյալ երկրի ներքին ու արտաքին պայմաններով: ԱՄՆ-ի զինանոցում կան բազմաթիվ մեթոդներ նպատակին հասնելու համար: Դրանցից հատկապես տարածված են տարբեր տեսակի սանկցիաները (տնտեսական, ռազմական, քաղաքական և այլն): Այդ մեթոդները նա օգտագործում է՝ պատճառաբանելով, որ տվյալ երկրում գոյություն ունի ոչ ժողովրդավարական, բռնապետական ռեժիմ: Շատ դեպքերում տնտեսական պատժամիջոցներին հաջորում են ռազմական գործողությունները, ինչը կարելի է համարել աղետի սկիզբ (Իրաք,Սիրիա,նախկին Հարավսլավիա): Հարկ է նշել, որ այդ մեթոդների կիրառումը միշտ չէ, որ նպատակային է, շատ հաճախ դրանք տնտեսապես թուլացնում են տվյալ երկիրը, սրում սոցիալական վիճակը, որի հետևանքով ենթագիտակցաբար ատելություն է առաջանում թե ԱՄՆ-ի և թե ժողովրդավարության նկատ-

մամբ: Կարծում ենք, վերլուծաբանների անելիքները մեծ են: Նրանց խնդիրը պետք է լինի, ոչ միայն զինանոցում առկա ձևերի ու մեթոդների կիրառման տեղն ու ժամանակը, այլ նաև տվյալ ազգի հոգեկերտվածքը: Ելնելով վերը նշվածից, կարծում ենք, ժողովրդավարության արտահանումը պետք է լինի տարբերակված: Ժողովրդավարության արտահանման առավել մեղմ, դանդաղ, սակայն արդյունավետ ու ընդունելի ձևերից են. Տվյալ երկրի հետ լայնածավալ առևտուրը, մշակութային կապերը, տուրիզմը, պատվիրակությունների փոխադարձ այցելությունները, որոնք կնպաստեն ազգային հոգեկերտվածքի վերակառուցմանը, արժեհամակարգի, մտահայեցության փոփոխությանը, ազատական արժեքների, շուկայական տնտեսության յուրացմանը և այլն: Բնական է, որ այստեղ առաջամարտիկի դերում հանդես է գալիս երիտասարդությունը: Այս մեթոդներով 20-րդ դարի 80-90-ական թթ կազմաքանդվեցին ԽՍՀՄ-ը և Արևելյան Եվրոպայի երկրները, նրանցից շատերը այսօր զարգացած ժողովրդավար երկրներ են:

Սառը պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ 1990-ականների սկզբին, դոնոր երկրների կառավարությունները բացահայտ հայտարարեցին Արևելյան Եվրոպայի երկրներին ժողովրդավարության ամրապնդման, շուկայական տնտեսությանն անցման նպատակով ֆինանսական օգնություն տրամադրելու մասին. նման կուրս որդեգրեց մասնավորապես ԵՄ-ն 1990թ. նոյեմբերին: Այն ներառում էր նաև պահանջներ քաղաքական բազմակարծության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների հարգման, ռազմական ծախսերի կրճատման, տնտեսության վերակառուցման ծրագրի իրականացման վերաբերյալ:

2003թ. «թավշյա հեղափոխության» արտահանման օբյեկտ հանդիսացավ Վրաստանը: Այնտեղ հասարակական կարծիքը հանդես էր գալիս հօգուտ դեմոկրատիայի, ժողովուրդը դժգոհ էր ներկայացուցչական ինստիտուտների աշխատանքից: Ազգաբնակչությունը ձգտում էր կարծիքը լսելի դարձնել ուղիղ՝ միտինգների միջոցով, դրանով իսկ ճնշում գործադրելով իշխանությունների վրա, ստեղծելով ճգնամաժամային իրավիճակներ: 2003թ. Վրաստանում տեղի ունեցան ընտրություններ, տարիների ընթացքում կուտակված դժգոհությունը, խնդիրները վերջին կաթիլն էին խախտումներով իրականացված ընտրությունների ֆոնի վրա: Միջազգային դիտորդները և ընդդիմությունը դրանք որակեցին ոչ ազատ և ոչ արդար: Նախագահ Է. Շևարդնաձեն երկար դիմադրությունից հետո ստիպված էր հրաժարական տալ և այդ ամենում ուղղակիորեն մեղադրել Արևմուտքին, մասնավորապես՝ հայտնի ֆինանսիստ Ջ. Սորոսին Վրաստանում պետական հեղաշրջմանն աջակցելու և ֆինանսավորելու համար: Ի հավաստումն վերը նշվածի՝ նշենք, որ կարճ ժամանակ անց լրագրողների մոտ հայտնվեց մի փաստաթուղթ, որում մասնավորապես ասվում էր, որ Վրաստանում Սորոսի հիմնադրամը ընտրությունների նախաշեմին 700 հազար ամերիկյան դոլար է հատկացրել ազատ, արդար ընտրությունների անց-

կացման համար: «Փաստաթղթում մասնավորապես շեշտվում է, որ պետք է իրականացվեն միջոցառումներ, աղմկոտ ակցիաներ, միտինգներ, երթեր, գործադուլներ» [4]: Ավելի ուշ Սորոսը հպարտությամբ նշեց, որ վրացական հեղափոխությունը իրականություն է դարձել՝ շնորհիվ իր փողերի:

Փորձ կատարվեց վրացական թավշյա հեղափոխության սցենարը կիրառել նաև այլ երկրներում, այդ թվում՝ ՈՒկրաինայում, Հայաստանում: Անդրադառնալով ՈՒկրաինային, հարկ է նշել, որ մինչ օրս այստեղ չեն դադարում հակասությունները, ներքին անկայունությունն ու արտաքին ուժերի ակտիվ միջամտությունը, ինչը հանգեցրել է երկրի տնտեսական քայքայմանն ու վտանգել տարածքային ամբողջականությունը: Թե՛ Արևմուտքը և թե՛ Ռուսաստանը ՈՒկրաինան դիտում են առավելապես որպես աշխարհաքաղաքական շահերի սպասարկման գոտի, ինչն էլ ավելի է բարդացնում իրավիճակը և անտեսանելի դարձնում հանգուցալուծումը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա իրավիճակը այստեղ բոլորովին այլ է: Հայաստանն ունի անվտանգության խնդիրներ, ինչի երաշխավորը այսօր Ռուսաստանն է, որը Հայաստանում ունի աշխարհաքաղաքական շահեր: Արևմուտքը, մասնավորապե՛ս ԱՄՆ-ը զբաղված են առավելապես Սիրիայով, ՈՒկրաինայով, որոնք աշխարհաքաղաքական առումով ներկա ժամանակաշրջանում ավելի կարևոր են ու նպատակահարմար:

Վերը նշվածից ելնելով՝ կարող ենք նշել, որ. ա) ժողովրդավարության արտահանման պարագայում տվյալ երկրի հասարակությունը պետք է պատրաստ լինի դրան. բ) մոտեցումը տարբեր երկրների համար պետք է լինի տարբերակված՝ ելնելով տվյալ երկրի աշխարհաքաղաքական, տնտեսական պայմաններից, մշակութային զարգացման աստիճանից, ազգային հոգեկերտվածքից: Միայն այս խնդիրները հաշվի առնելու պարագայում նրա հաջողությունը կլինի երաշխավորված:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Риз-Моог В.** Освобождение Ирака началось 4 июля 1776 г. (www.inopressa.ru)
2. **Риз-Моог В.** Освобождение Ирака началось 4 июля 1776 г. (www.inopressa.ru)
3. **Московский комсомолец.** 2004, 24 марта.
4. **Кравченко А.И.** Политология: Учебник. - М.: Проспект, 2007. - 330с.

Н.К. БАГДАСАРЯН

ЭКСПОРТ ДЕМОКРАТИИ И ЕГО ПОСЛЕДСТВИЯ

Описывается современный процесс экспорта демократии, что в каждой стране является серьезной проблемой. Особое внимание уделяется постхолодному военному периоду, как наиболее активному. Даются характеристики демократии в разных странах, что связано с уровнем развития страны и национальной идентичностью.

Ключевые слова: демократия, экспорт, страна, национальная идентичность.

N.K. BAGHDASARYAN

EXPORTING DEMOCRACY AND ITS CONSEQUENCES

One of the modern and important problems of exporting democracy faced by every country nowadays is referred to. Special attention is paid to the post Cold-War period as the most active period. Reference is made to the characteristics of exporting democracy to different countries, depending on the development level and national identity of the given country.

Keywords: democracy, export, country, national identity.

ՀՏԴ 321.01.329

Ա.Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՅԴ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

Անդրադարձ է կատարվել ՀՅԴ-ի՝ հայրենիք վերադառնալու անհրաժեշտությանը, պետականաշինության գործում և արցախյան ազատամարտում նրա ունեցած դերակատարությանը: 1990թ օգոստոսի 8-ին. պաշտոնապես Հայրենիք վերադարձավ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որն ակտիվ մասնակցություն ունեցավ Ղարաբաղյան շարժմանը՝ հիմնահարցի զարգացման բոլոր փուլերում: Միաժամանակ ձգտելով իր հնարավորությունները դրսևորել նաև Հայաստանի Հանրապետությունում անկախ պետականության հաստատման ու ամրապնդման գործընթացում՝ՀՅԴ-ն մի շարք սկզբունքային հարցերում ընդդիմադիր դիրք ընդունեց իշխանությունների նկատմամբ: Իշխանությունների հետ ՀՅԴ տարաձայնությունները ի վերջո հանգեցրին կուսակցության դեմ սկսված հալածանքներին: 1998 թ. փետրվարի 9-ի որոշմամբ պաշտոնապես վերականգնվեց ՀՅԴ-ի գործունեությունը ՀՀ-ում:

Առանցքային բառեր. Հայ Յեղափոխական Դաշնակցություն, հայրենիք, ընդդիմություն, Արցախյան շարժում, կուսակցություն:

1988 թ. օգոստոսին գումարված ՀՅԴ 24-րդ Ընդհանուր ժողովը մշակեց մի ուղեգիծ, որը ստացավ Խ. Մալումյանի «Դէպի Երկիր» կարգախոսը |1|: 1989-ին սկսվեցին ՀՅԴ աշխատանքները հայրենիքում, իսկ 1990թ. օգոստոսի 8-ին. Հայրենիքում իր ներկայության մասին պաշտոնապես հայտարարեց Հայ Յեղափոխական Դաշնակցությունը: ՀՅԴ-ն իր էությամբ, աշխարհայացքով և ավանդույթներով ազգային, սոցիալիստական |2|, ժողովրդավարական և հեղափոխական կուսակցություն է, որը պայքարում է հայության տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային շահերի պաշտպանության համար (ուշագրավ է, որ ՀՅԴ-ն հեղափոխություն բառը մեկնաբանում է հետևյալ կերպ. ի տարբերություն մարքս-լենինյան օտար և ապազգային գաղափարախոսությունից ծնված հեղափոխության, որ պարտադրվեց աշխարհի շատ ժողովուրդների, Դաշնակցության հենց անվան մեջ «հեղափոխական բառից առաջ դրված է «հայ» բառը, որ նշանակում է, թե հայկական հեղափո-